ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Արմավիր 16.04.2019թ. Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սարոյան
Անդամներ՝ Ս. Սարգսյան, Կ. Հակոբյան,
Մրցույթի համակարգող՝ Ա. Թաշչյան

1. **Կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության և ընթացակարգ չկայացած հայտարարելու մասին**

1.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Կոմիտեի տրամադրած տեղեկատվությամբ Արտավազդ Պետրոսյան ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում սահմանված պահանջներին: Հանձնաժողովը որոշեց Արտավազդ Պետրոսյան ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

1.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

2. **Հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջին տեղ զբաղեցրած ճանաչելու մասին**

2.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով այլ մասնակից հայտ չի ներկայացրել, հանձնաժողովը որոշեց այս չափաբաժնով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

2.2 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի 2; 6; 27; 33 և 41 չափաբաժիններով երկրորդ տեղ է զբաղեցրել Ցիկլոիդ ՍՊԸ-ն: Հանձնաժողովը որոշեց Ցիկլոիդ ՍՊԸ-ին 6; 27; 33 և 41 չափաբաժիններով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից և մասնակցին ծանուցել առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1 ենթակետով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

3. **Կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության մասին**

3.1 Հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-02-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

4. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին**

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը 11:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ _____ Ի. Սարոյան
Անդամներ՝ _____ Ս. Սարգսյան
_____ Կ. Հակոբյան
Մրցույթի
համակարգող _____ Ա. Թաշչյան